

5 մայիս.

Այս առաւօտ ժամը իննին կայարանն եմ, ուր կը գտնեմ բազմաթիւ անձինց՝ որոց հետ ծանօթացայ Անկիւրիոյ մէջ. սոքա աղնիւ քաղաքավարութեամբ մը եկեր են ինձի իրենց հրամեշտի վերջին բարել տալու : Երկաթուղույն տեսուչներէն մին՝ որ ամենազնիւ անձ մ'է, ինձի կ'ընկերանայ մինչև ի Փոլատլը, և իւր ախորմելի ընկերութեամբն կը համապատէ ճամբորդութեանս ձանձրանայի ժամերը: Վեցուկէսին կը հասնիմ յլուրիշէնիր, և կ'ինեմ գերմանական պանզոկ մը, վասն զի գալու տանենս իշխանած պանզոկիս տէրն արտաքսուեր է վասն զի... յնին: Երջան մը կ'ընեմ քաղաքին մէջ կառօց : Պանզոկը վերաբանալին առաջ՝ կը մոնեմ տաճկական սրճարան մը. լայն սրահ մ'է, չորս կողմը բազմոցներ զրուած՝ որոնց ամառ տանեն անտարակոյս մակարոյժ կենզանեաց բոյներ պէտք են ըլլալ: Յաճախորդներն կը նստին այդ բազմոցաց վերայ, և կը կենան հոն բոլորովին լրջութեամբ և արելեան անխափութեամբ. լսիու բան է իրենց նարկիշէնի խոխոչինը, և մէկ ումազով իրենց համեմաւոր տաճկական խահուէն կլեու ձայնը: Մրճարանի անկեան մը մէջ կայ նուա սափրիշի փոքրիկ սեղան մը իւր բովանդակ կարեոր զործիքներով միասին. և այս պաշտօնս կը կատարէ նոյն ինցն սրճարանի տէրն: Վազը իրիկուն ի կոստանզուու պոխու պիտի ըլլամ:

Անկիւրիոյ մէջ անցուցած օրերս ինձի համար շատ շահեկան և ամենահաճույքական եղան: Յիրափ մեծ կորուստ մը պիտի ընէ արուեստն, եթէ այն հին շնչերու մացորդները — զորս տեսնելու բախտն ունեցայ — այնպէս երեսի վրայ ձգելով ի կորուստ մաստնուին: Ինձի ըստին, թէ անզիգական հնախոյդ ընկերութիւն մի մասնաւոր թօլլտուութեամբ՝ պիտի երթայ ցիշ ատենէն Անկիւրիքա: Երանիք թէ սոտոյք ըլլար այս լուսու, վասն զի հնութեան այդ մացորդներն ըստ ամենայնի արժանիւ են ծանօթանալու բովանդակ արևեստագիտական աշխարհի:

Թրգմ. Հ. Կ. ԱԲՐՈՅԱՐԵԱՆ

## ՄԱՐԱԲԱ ՄԾՈՒՐՆԱՑԻ

Կ.Ա.Մ

Կ Ե Ղ Ծ - Ա Գ Ա Թ Ա Ն Գ Ե Ղ Ռ Ս

(Տար. տես էջ 274)

Բ.

Անանունի նապատակը:

**Ա**նԱՆՈՒՆԻ միայն մէկ նպատակ ունի՝ փառաբանել բազրատունեաց տոհմը: Նա կամենում էր հանգէս բրել բազրատունեաց ծագման հնաւթիւնը, որ՝ իրր թէ, Նարու զոգնոսորի ժամանակներն էր հասնում, և միեւնոյն ժամանակ նկատելի կերպով շեշտել ոյն մեծարանը և այն բացառիկ զիգբը, որ վայելում էր նոյն իշխանական սահմը՝ որպէս թէ զետ առաջին երկու Հայոց հարաստութիւնների՝ Հայկազունեաց և Արշակունեաց ժամանակ: Եւ այս այնպիսի մի ժամանակամիջոցում, երբ Անանունի մօտ չը կայ յիշատակութիւն և ոյ մէկ ուրիշ հայկական իշխանութեան մասին: Այս միթէ նպատակաւոր զրուածք չէ:

Այսպէս՝ Հայկազունեաց առասպելական հարաստութեան ժամանակ, բազրատունիր իրենց եւս հայկական ծագմամբ, տիրում են արեւմտարում մի տառձին զաւածի, որ Անկեղ և տան է կոչվում (և որը իսկապէս, պատկանում էր նորս Հ. Մ. Թ. Պ. զարերում): Իսկ բազրարար անզամ ատուուած է կոչուած: Առաջին հայ Արշակունու օրերում (Փրկչական թուականից երկու զար առաջ), բազրարար երկրի առաջին և ամենափառաւոր իշխանն է, իսկ իր զատեր ամենանութեամբ առաջին Արշակունու հետ նա զարձաւ՝ բաց ի զորանից, նաև ազգական Հայոց

թագաւորի՝ նորա « Հայր և Եղբայր »<sup>1)</sup> Այդ, անշուշտ յիշողութիւն է (reminiscence) խական անցըի, որ յետոյ է տեղի ունեցել, այն է՝ Արշակունեաց մէկի, Վազ-արշակի, բագրատունի Ասպետի տոհմի հետ՝ Փրկչական դր. զարու վերջում։ Արգարեւ, Պապի որդին վաղ-արշակ ամուսնացաւ Ասպետի զատեր հետ, մինչդեռ նորա աւագ եղբայր Արշակը պատկուած էր սպարապետ Մանուկը Մամիկոնեանի զստեր հետ։ Նոյն իսկ Բագրատունիքը, Փաւստոսի աւելով (Ե., 44) « Թագակապը յեալ Էին ի բնմ է ազգին թագաւորութեան Արշակինց »։ Անանունի այս ճարտար ազգակցական զուգալութեան մէջ, որ յիշեալ զէմբը 600 տարով կառիսած է, կարելի չէ ընկատել իբրեւ նուրբ ակնարկ Բագրատունեաց նախապատիւ իրաւոնդին հայոց զահը ժառանշագեղութեանը իրենց մերձաւոր ազգակց Արշակունիներից յետոյ, — մի նոպատակ, որին, յիրափ ձգում էին նորա Ը.ո՞ո՞ զարու ընթացքում և հասան իրենց նպատակին միայն Արշակունեաց հարստութեան բառնալուց 450 տարի յետոյ՝ այն է 887 թուին։

Առհասարակ, ըստ նայելով Անանունի պատմութեան կարծեցեալ պարզութեանը, անարուեստականութեանը և՝ ըստ երեւութին, նոյն իսկ անկապութեանը, հեղինակը կարելոյն չափ աջող կերպով ներկայացրեց և շեշտեց Բագրատունեաց միտումը (tendence), որի համար, իսկապէս, և մտածուած է մեր քննութեանը ենթարկած յիշատակարանը։

Ֆ.

Անանունի կապը Սերիոսի հետ։

Մենք արդէն դիտեցինք, որ Անանունը իր մի քանի աղքարներից՝ ամենից աւելի մօտ ծանօթ է Սերէսոսի Պատմութեանը։

Նա իրացրեց այդ հեղինակի ոճը, զրութիւնը և Եղանակները, փոխ առնելով նորանից ոչ սակաւ բնորոշ զարձուածքներ և համարեա բոլոր աշխարհազրական անունները։ Այդ՝ Անանունի, այսպէս առած, արտաքին կապն է Սերէսոսի հետ։

Ակայն Սերէսոը ունէր Անանուն հեղինակի համար և մի ուրիշ՝ աւելի թանկագին յատկութին իր ներքին բովանդակութեան և իմաստի կողմանէ. լինելով Բագրատունից եպիսկոպոս՝ նա միեւնոյն ժամանակ, ինչպէս յայսնի է, էր և առաջին պատմութիւն թագրատունեաց տոհմին։ Նորա « Պատմութիւն ի Հերակլ » գրուածքի մէջ բաւական չափով մենք զանում ենք հետաքրքիր նկարագրիներ և յիշողութիւններ թագրատունեաց մասին և մանաւանդ նացանից ամենանազման ի երիցազյն իշխան։ Սմբատ Բագրատունու († 618) մասին։ Սորանից իսկապէս և մկանում է թագրատունեաց բարձրանը և զօրանալլ, որոնք երկու զար յետոյ ձերին նաեւ թագրատունեան զահ։

Բագրատունեաց փայլուն գարագիրի ժամանակակիցներին կարող էր բնական երեւի ենթագրելու, թէ նոյն իշխանութեան ներկայ վիճակը հաւանականորէն ունեցել է և ոչ պակաս փառաւոր անցեալ։ Գուցէ Բագրատունի իշխանաց իշխաններին անզամ՝ պէտք էր քաղաքական նպատակներով շեշտել այդ անցեալը և նոյն իսկ անցեալի վերայ հիմնել իրենց ներկայ յաւակնութիւնները։ Այն ինչ հայոց պատմագրիները մինչեւ Սերէսո շատ սակաւ էին հաղորդում Բագրատունիների մասին այնպիսի բան, որ ուշագրութեան արժանի լինէր Անանունի տեսակէտից։ Ցանկալի տեղիկութիւնների բացակայութեան պատճառով՝ կարիք զարցուեց յօրինել Հայաստանի հնագոյն պատմաթիւնը և արդէն նորա մէջ պատճանաւոր տեղ տակ Բագրատունեաց իշխանութեան, Այդ աշխատավութիւնը այնպիսի մի վկայագիր պէտք

1. Սերէսոսի առաջին հրատարակիցը (էջ 22-24), որ բարովին չէր կասկածում Անանունի պատճաճի հշտութեան մասին, ամենալուրջ կերպով հիմում էր Բագրատունեաց և Արշա-

Եւ այսպէս, այդ անհլւեր գոտածքը երեւան է զալիս իրեւ բնական լրացումն Աբքէ ոսի թագրատունեաց Պատմութեան, մի լրացումն, որ պարունակում էր նոյն պատմաբանին անյայտ բայց թանկագին տեղեկութիւններ այս նշանաւոր տաճի առաջնայական նահապետների մասին։ Այս խոհ

Հ. Հաս երեւութին՝ Սահմարուկի պա-  
լասի և եան Պարսից գուռը պահանջվել՝ ըստ  
Անանունի (էջ 1). Կախում ունի Փաւառոսի  
(Ք. 24) հաղորդած պատմութիւնից՝ հայոց թա-  
գաւորուների գերեզմանների կործանման մասին  
պարսիկների ձեռքով (Ք. դարձմ. Ք. յ.), ո-

պատճառով պէտք է նոյն զրուածքը կցած  
լինէր Ա եր է սոսին, որպէս նորա սկիզբը,  
և միանար նորա հետ՝ կորցնելով հեղինակի  
անձնաւորութիւնը և այդու անվաներական  
գառնալով։ Առանձին՝ իրը ինընուրոյն երկի,  
այդ յիշատակարանը՝ իմ կարծիքով, հազի՞  
թէ երը և ից գոյութիւն ունեցած լինի։

Մեղ կետաբըրող անանուն Հասուածը չէր կարող կցած լինել և միս հայ պատմագիրն. Ազաթանգեղի սկզբամը, օքնակ, նաև բացարձակ հակասութիւն կ'երեւէք «Հայոց գարձի պատմութեան», որ ոչինչ այցփսի չէ յիշլում ոչ բազրատունեաց և ոչ Պարթեաց ոչ Հայոց թագաւորների ցուցակների մասին: Բայց ի դորանից, հակառածին կը լինէ և Ազաթանգեղի դորսին յաջրողով Նորու աշխատաթիւնից օպտուող պատմագիրինքին, որոնց նոյնպէս ոչինչ յայտնի չէր Բաղրատունեաց առնմապետների մասին այն ձեւով, ինչպէս Ընանունն էր այդ հաջորդել: Եւս աւելի անտեղի կը լինէր մեր Հասուածը Ասերէսուն նախորդ հեղինակների պատմութեան սկզբամը, այսինքն Փաւուոսի, Փարագեցու և Եղիշէի, որոց գուածքը ները նուիրուած են բացառապէս Մամիկոնեանց փառականութեան այլ հօր նախարարական ցեղի, որ անեղարար մրցւամ էր Բագրատունեաց հետ է.՝ թու թու լ.՝ թու թու կարերում Հայաստանի գերազանց իշխանութիւնը ձեռնութիւնը ձեռնութիւնը:

9

Անանուն Հատուածի կ ազմելու ժամանակը :

Անանունի արդէն անուբանալի յարակցութիւնը Սերբոսի հետ ցոյց է տալիս, որ նա կազմուած է ոչ վաղ, քան ի. դարու

բանքը կարողացան բանել Սահմառուկի շիրքում «վասն անհեղեղ և կայազործ հաստաշինած ճառագայթապարձ պարագան»:

2. Հմատ. Ղեղանդ, Հրատ. Ա.-ՊԲ., 1887,  
էջ 123-124, Աստղիկ, էջ 104:

վերջում (Հերակլի պատմագիրը իր զրոխիւնը հասցնում է մինչեւ Մալիսա Խալիֆան, որ իշխեց 664-680թ.): Բաց ի զրանից, նոյն իսկ մեզ հետաքրքրող զրուածում կան հրմանքներ՝ բաւական ճիշտ որոշելու այն ժամանակամիջոցը, որից առաջ նա չէր կարող զրուած լինել, այսինքն՝ զարձեալ ոչ վաղ, բան է. զարը: Կ իւլիկ ե ան յիշլում է Անանուն հատուածում (Էջ 9), որպէս Պարթեաց թագաւորութեան մի մասը. այն ինչ ճիշտ յայտնի է, որ Պարթեաները երբէք չեն տիրել այդ երկիրն. Նորան զրուեցին, այն էլ ոչ երկար ժամանակով, Ասսանեանները՝ առաջին անգամ խօսրով Անուշիրուանի (531-578թթ.), երկրորդ անգամ՝ խօսրով Ասկրուէդի օրով՝: Իսկ եթէ համաձայններ իմ՝ վերը յայտնած ենթադրութիւնների հետ, թէ Անանունը, արդարեւ, սպասել է Յովհան Փիլիսոփայի կամ՝ Օձնեցու աշխատութիւնից, Օձնեցու որ կառավարեց Հայաստանեայց եկեղեցին 722 թուականից մինչեւ 733թ., - ապա Հատուածի կազմելու ժամանակը պէտք է մերձեցնենք Բ. զարու կիսին:

Միւս կողմից, Անանունի երեւան զայը չէր կարող և ժ.՝ ուր զարից ուշ լինել, որպէս հետեւ արդէն թուամբ Ալոքունին, որ ապրում էր թ. զարու վերջին և ժ.՝ ուր սկզբին, բառացի քաղուածք է անում նորանից:

Ենթադրելու է, որ Անանունը հատուածը ծանօթ էր և Յովհաննէս կաթողիկոս

պատմաբանին (թ. զարում)՝ հակառակ Ա. թառումզարտների պնդելուն (ZDML, XL, 466, ծանօթ. 4), և Ասողիկին (ժ. - ժԱ. դ. գ.), որովհետեւ անկասկած է, որ սոքա օգտուել են Սերիսուից, որի սկզբումը, հաւանականորեն, զետեղուած էր և մեր Հատուածը: Բայց երկու պատմազիրներն եւս հարկ չեն համարել յիշել իրենց կարծիքով և խորենացու վիայութեամբ՝ այսպիսի մի ոզորմելի զրութեան մասին, մանաւանդ, որ նոյն բովանդակութիւնը նորա ունեին իրենց առջեւ՝ մշակուած խորենացու հրաշալի նկարգրութեամբ: Զէ՛ որ Ասողիկ բաց է թողել իր ժամանակազրութեան մէջ « Հայոց Պատմութեան » ամբողջ առաջին զիրքը, այսինքն ազգային պատմութեան առասպելական շրջանը, ըստ Մոլոխի. բայց ոչ ոք այս հիման վերայ չէ ենթադրել, թէ նա չունէր իր ձեռքում խորենացու Պատմութեան լիակատար օրինակը: Այսինքն ուրեմն Բ.՝ Պարու կ իսու և թ-որդի զերջի միջն որոնելու և մեր Հատուածի կազմելու ժամանակը:

### Ե.

Ի՞նչ վիճակում է հասել մեզ Հատուածը:

Սոյն ինդրին վերաբերեալ՝ զիանական ների արած բոլոր զիտողութիւնները, ինչպէս մեսանք, կարելի է ամփոփել հետեւեալ կետերում. թէ մեր Հատուածը ենթարկուել է

---

1. Տես Սերենս, էջ 28 և 81. հմատ. նաեւ Fabari, Nöldeke, էջ 290 և հետեւ:  
2. Հրատ. Ա.-ՊԲ. 1887, էջ 22-23: Համեմատնենք երկու զրուածքի նշան կէտերը.  
Անան. (էջ 3)... Թուվին (էջ 22-23)...  
Յայնմ ժամանակի բառ իսկ ներսովէթ ինքնագաւորեաց ի Բարեկոն զիմաբար առաց զինքն որորդ հոկայ թէկն...  
Հ շ-ւ-ր զարդութեամբ թեալ ի բարեկոնի սաս...  
... Որոյ արարեալ տիկ զօրութեամբ՝ առա ալարց կախարդութեամբ և երա ման թագաւորական ամենայն ազգաց և ըլ-

պարտութեան ամբարտաւանթեան իւրոյ երկնից. և ետ երաման ահեւ մեծաւ ամենայն կանգնեաց զարտուիերն սւրեգ կանգնել զպատիրը և եւ երկիր պաշանել իրեւ աստու զանել իրեւ աստուժոյ և զոհս մատուցանել զանել:  
(Նոյն տեղում, էջ 4). Ծովն ես դոց (ասէ 23) . . . ոչ միայն զի Հայկ ցիէն) և յերա չես աստուած (քամահէ մակի շանց՝ դու և ժու Հայկ ցիէն), այլ չուն շուզուրդ քու:

(Նոյն տեղում, էջ 4). Ծովն ես դոց (ասէ 23) . . . ոչ միայն զի Հայկ ցիէն) և յերա չես աստուած (քամահէ մակի շանց՝ դու և ժու Հայկ ցիէն), այլ չուն շուզուրդ քու:

սաստիկ աղքատման. թէ նորա մէջ կան յապաւումներ՝ և երբեմն ընդարձակ. թէ, վերջապէս, նորա կազմելու մէջ նկատում է մի քանի հեղինակելերի մասնացուքրին, այն է՝ Մծուրնացի Մարտացի, . Անանունի և մի երրորդ անձնաւորութեան :

Առաջին կտրի մասին պէտք է դիմել, որ՝ զուցէ, բաց ի յառաջարանի երկու մկրպրնական առղերից և Աշտարակաշինութեան նկարագրութեան երկու երեք տողերից (Էջ 2), որոնց կարող են ընդունուիլ և իրեւ ոճի հսկմութեան կամ ազուտմիւն, բայօթ մնացած մասը՝ իմ կարծիքով, չե ներկայացնում այնպիսի ազնատումն, որ զգալի կերպով արգելք լինէր բնազիրը ճիշտ հասկանալուն. ինչ ինչ վրիպակներ և սխալներ կարող էին՝ ի հարկէ, սպրդուիլ Հատուածի մէջ ընօրինակողների անուշագրութիւնից, սխալներ, որից սակայն զերծ չե ոչ մի քիչ թէ շատ հին յիշատակարան, մանաւանդ այնպիսին, որ ծանօթ է մեզ միայն երկու զրչագիր օրինակից :

Հազիւ թէ հիմնաւոր են և այն ենթագրութիւնները, որ յայտնած էին Հատուածի բերի կամ կիսաս լինելու մասին : Օրինակ, Ն. Յ. Մատան կարծում է, թէ բաց են թողած Արբանամի ասրկուհի՝ Մարտիսկի երկու որդոց անունները և սորա սերունդներին վերաբերեալ մանրամանութիւնները Հայաստանում՝ անմիջապէս Անանունի պատմած « Ապստամբութիւն Պարիծեաց » անցքից առաջ (Էջ 6-7) : Բայց այս կարծեցեալ թերութիւնը բացարկում է մեր Հատուածի նոյն տեղում առաջ բերած « Փառուխտ » և « Փառական » կոչումներով, որովհետեւ սորա են հակապէս Արբանամի ասրկունու խնդրելի որդիքը, որոնք իրենց անունները տախն յայտնի տեղերին : Ըստ երեւութիւն՝ այսպէս էր հասկանում նոյն տեղը և Հատուածի ուսերենի թարգմանիք. Պատիկանեան (Էջ 7-8) : Անհասարակ, ես կարծում եմ, որ մեր յիշատակարանը իր ծագման սկզբում իսկ ունէր

այսպիսի կցկուոր, հատուածական բնաւորութիւն, մի տեսակ նախագծի կամ անկատար գրուածքի կերպարանը՝ ընդ սմին մի քանի նպատակաւոր անտեսութիւններով; Եւ որիշ կերպ չէր կարող լինել. Անանունին, որ առաջնորդված էր արդէն մեր յայտնի նպատակով՝ փառուանել Բագրատունիներին, պէտք էին կարճ, բայց աջող ախնարկներ « արձանագրութեան » յատուկ հատուածականութեամբ. իսկ գրուածքի արտաքին մշակումը և կատարելութիւնը նորա նպատակից գորս էին : ի զոր չէր խորենացին ասել այդ գրութեան մասին. սի բայ բանից և անոն իմն յաղազ Հայկայ և նմանեացն կա ազ է» (Ա., 22) :

Ինչ վերաբերում է մի քանի անձանց մասնակցութեամբ Անանուն գրուածքի կազմելում՝ այդ կարծիքն եւս շատ քիչ հաւանականութիւն ունի : Արդէն հեղինակի լեզուի ու զրութեան միակերպութիւնը, մի և նոյն աղբիւների գործառութիւնը բոլոր յիշատակարանի մէջ, վերջապէս և զրուածքի ամրութիւնը՝ նորա մէջ տիրող կանխակալ նպատակի վերաբերմամբ, որ անցնում է ծայրէ ծայր՝ բոլոր Հատուածի միջով, հակասում են այդ անսակ ենթաբութեան : Իսկ հեղինակաւոր անձանց՝ Ասօրի Մարտարայ Փիլիստիվային, առաջին Հայոց պատմագիր Արքանագնոսին և առաջին քրիստոնեայ հայ թագաւոր Տրդամի վկայ կոչելը՝ հոչակաւոր « արձանագրութեան » արքունական ապարանքի աւերակներում գտնուելու մանրամասնութիւնների հետ միասին, — անիմաներ գրուածքների մեծամասնութեանը յատուկ արօւեստական եղանակ է՝ նպատակաւոր մասցածին յիշատակարանին, ինչպէս զիտել էինք, հաւաստիութիւն ընծայելու զիտմամբ :

Անանուն Հատուածի է ու թիւնը պարզելուց և նորա կազմելու ժամանակը որոշելուց ինքնարանինեան լուծվում է և խորե-

\*. Տե՛ս վերը յիշած նորա ուսումնասիրութիւնը Անանունի մասին, էջ 276:

Ց. Հմատ., օրին, իմ հետազտութիւնը նման

անվաւեր գրուածքի մասին՝ « Զենոբ-Գլակ »: Վիեննա, 1893, Էջ 61 և հետ.

նացաւ զէպ ի նա յարաբերութեան խնդիրը : Մովսէսը, ինչպէս հիմնաւոր կերպով ապացուանում է պրօֆէսօր կարիեր, ապօնէ է Բ.-Ռ. զարուց ոչ զազ և մինչեւ անգամ Թ. Ռ. զարու սկզբումն Դորանում մենք աւելի եւս կը համազուինք մեր հետազուաթեան մէջ բերած մի քանի նոր հանգամանքների հիմամբ . ուստի հասկանալի է, որ Խորենացին ապրելով Անանուն Հատուածի երեւան գալուց յ ե տ ո յ, կարող էր Նորանից օգտուել Բայց մենք ունինք և աներկրա ապացոյ՝ թէ հայ պատմաբանը արդարեւ ժնանօթ էր Անանունի զրուածին : — Վեհրը մենք սեմանք, ինչպէս Բազրատունեաց առնմասպա թագարատին, որ ապրել է հարուգործնոսորին փոքր ինչ յետոյ, Անանունը առաջ է բերում չ այ կ ի որդիք Արամանեսակի սերանդից, իսկ Խորենացին իր պատմութեան Ա. Վ. զբքի 22-դ զիսում, խօսելով Բազրատունեների ծագման մասին Շամբաթից, որ Նարուգործնոտորի զերի վարած զիմանակուեց Հայատանան, և եռանդուն կերպով համոզում է իր մեկնասին հաւաս շընծայել նոցա, որ Բազրատունի տոնմը առաջ են բերում Հայկից : « Քանզի ասեխն ոմանց անհաւասարի մարդոց բառ յօժարութեան և ոչ ըստ ճշմարտութեան, ի Հայկա զթագաղիր ազգգ լինել Բազրատունեաց : Վասն որոյ ասեմ, մի այսինքնաց յիմար բանից հաւանիք, զի և ոչ շահիդ կամ ցուցում ոց նմանութեան յասացեալսկ՝ որ զարդարութիւն ակնարիէ . զի ի բայ բանից և անձ իմ յադապ Հայկայ և զնմանեացն կական, Բայց ծանիր զՄարտոդ անուն, որոյ յանախ Բազրատունիք ի վերա պատանեաց կոշեն, ճշմարտի Շամբաթ է՝ ըստ նախնի իրեւանց խօսիցն, որ է Երբայեցի » :

Այստեղից պարզ է, որ յիշեալ զարձուածներում Խորենացին ակնարկում է իսկ և իսկ Անանուն Հատուածը, որովհետեւ Հայոց ամբողջ հին գրականութեան մէջ լը կայ բաց ի Անանունից մի այլ զրուածք, որին այդքան ճիշտ յարաբուէր հայ պատմաբանի սուած բնորոշ և աջող կոչումը և ի բայ բանից և անձ իմ... կականք » : Միայն Անանուն զրուածին է մատանանիշ անում Բազրատու-

նեաց հայկական ծագման վերայ, որի զէմ այնպէս խիստ զինուում է Մովսէս : Նոյն իսկ այդ իշխանութեան հրեական ծագման գաղափարը՝ ըստ ամենայն հաւանականութեան, ներշնչուած է երեւամ Անանունից, որովհետեւ առ Բիբլիական « Փաքրարայ » անունից, որպա պատահում է Նարուգործնոսորի գերի վար հրէաների թվում, յարմարեցեց նոյն աշխարհակալի ժամանակամիջոցին և բնիկ հայկական բազրատունեաց ցեղի տոհմազետ Բազրատախն՝ անունների նմանութեամբ : Այլ իսկ պարագաներից Մովսէս Եղակացութիւն արեց, յայտնի չէ թէ՝ ինչից դրուած, Բազրատունեաց հրէական ծագման մասին :

Սակայն չը նայելով իր արհամարհական կարծիքին Անանունի մասին, Խորենացին չը մերժեց բոլորպին, ինչպէս կը աեսնենք, նորա աշխատութիւնը . նա ղեց այդ զրուածը « Հայոց պատմութեան հիմքը, որպէս Նախագիծ, և մշակեց ու ընդարձակեց նորան՝ նորացնելով նորանոր մանրամասնութիւններով և միանգամայն նոր կերպարանքով ներկայացրեց ոչ միայն իր մեկնասաների նախնիք Բազրատունեներին, այլ և իր հայրենիքի ամբողջ սկզբանական պատմութիւնը :

Ահա թէ ինչ մտքով հասկանալու է Գուտշմիդի վերին աստիճանի սրամիս նկատղութիւնը, թէ Անանուն Հատուածը Խորենացու առաջին սուտերացիրն էր :

Եւ հազի թէ վասահութիւն համարուի ընկանել նշանաւոր զերմանացի քննացատի խօսքերը նոցա ուղիբ՝ բառացի իմաստով, պարինքն թէ՝ « Հատուածը » պատկանում լինի նոյն Մովսէսի զրշին, որպէս նորա « Հայոց պատմութեան » նախապատրաստական ծրագիր : Յամենայն դէպս՝ երկու զրուածքների ժամանակակցութիւնը (Բ.-Թ. զար) և մանաւանդ երկու հեղինակներին ընդհանուր, այնքան բնորոշ համանման և զանակները, զիտաւորութիւնները՝ շատ ծանրակշիռ փաստեր են, որ կարելի լինէր արհամարհել նոցա ու կամ զիւրին կերպով նոցա բացատրել :

Թբիլիս Լիգարիթ ՆԱԶԱՐԵՆԱՑ